ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

«ՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «04» դեկտեմբերի 2019թ. ժամը 10:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Բաբայան /գնահատող/

Անդամներ՝ Գ. Ղազարյան /գնահատող/, Վ. Գասպարյան /գնահատող/

Ն. Սարգսյան /բացող/, Հ. Մինասյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մնացականյան /համակարգող/

1. <u>Տեղեկություններ հայտերի բացման և գնահատման նիստի մասին</u>

Ընդունել ի գիտություն, որ հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերը հրապարակելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 10:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. <u>Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեների մասին</u>

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ աշխատանքային կարիքների համար «ՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակիցների անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1.	«Տեխնոֆորում» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Շիրազի 36, բն. 14	info@technoforum.am Հեռ. (+374 91) 00-96-10
2.	«ԱՅԹԻ 365» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Աիարոնյան 2, 5-րդ հարկ	it365.am@gmail.com; gnumner@it365.am Հեռ. (+374 12) 51-00-01

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

«ՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով ընթացակարգի մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները՝

Չափաբաժին 1: «DameWareRS Հեռահար կառավարման ծրագրային փաթեթ»

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գինը /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
1	«Տեխնոֆորում» ՍՊԸ	255375	306450
2	«ԱՅԹԻ 365» ՍՊԸ	490000	588000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Չափաբաժին 2: «USB Network Gate USB պորտերի հեռահար կառավարման ծրագիր»

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գինը /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
1	«Տեխնոֆորում» ՍՊԸ	561250	673500
2	«ԱՅԹԻ 365» ՍՊԸ	2035000	2442000

«ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի գնային առաջարկը մերժվում է, քանի որ գերազանցում է գնումների պլանով նախատեսված գինը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1. «ՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով գնման ընթացակարգի 1 և 2 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Տեխնոֆորում» ՍՊԸ-ին՝ որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող մասնակից:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
3. **<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:**
4. Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի (տասը) տոկոսի չափով, մեկ տարի երաշխիք և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վ. Բաբայան

Անդամներ՝ _____ Գ. Ղազարյան

_____ Վ. Գասպարյան

_____ Ն. Սարգսյան

_____ Հ. Մինասյան

Քարտուղար՝ _____ Ա. Մնացականյան